«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ՀՀ, 375012, ք.Երևան, Բուզանդ 1/4, հեռ.՝54-17-89, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100, ՀՎՀՀ 02504913

Թիվ ԵՔԼ-ԲՄԱՇՁԲ-24/2 ծածկագրով

«Երքաղլույս» ՓԲԸ-ի տնօրենի

**Որոշում թիվ 1**

ք.Երևան

24.06.2024թ.

«Երքաղլույս» ՓԲԸ-ի գրասենյակի և պահեստային շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով՝ Պատվիրատու «Երքաղլույս» ՓԲԸ-ն 29.03.2024թ.-ին հայտարարել է ԵՔԼ-ԲՄԱՇՁԲ-24/2 ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնով հայտ է ներկայացրել նաև «ՊԱՊԻԿՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերով պահանջվել է, որ Մասնակիցը պետք է ունենա շինարարության իրականացման գործունեության լիցենզիա՝ ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտների՝

բնակելի (բացառությամբ ոչ ձեռնարկատիրական նպատակով կառուցվող անհատական բնակելի տների, ավտոտնակների, օժանդակ շինությունների, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների), հասարակական և արտադրական:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2023թ.-ի որոշմամբ, Արձանագրություն թիվ 3, կետ 4.1.1 հանձնաժողովն արձանագրել է, որ «ՊԱՊԻԿՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի շինարարության իրականացման լիցենզիայի վերաբերյալ տվյալներ առկա չեն ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում և Քաղաքաշինության կոմիտեի պաշտոնական կայքում առկա լիցենզավորված կազմակերպությունների ցանկում, որը ենթակա է շտկման:

«ՊԱՊԻԿՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին հանձնաժողովն առաջարկել է ծանուցումն ստանալուց հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն առկա անհամապատասխանությունները՝ շինարարության իրականացման լիցենզիայի վերաբերյալ տվյալի բացակայությունը շտկելու փաստաթղթեր «ՊԱՊԻԿՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել.

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթները՝ «ՊԱՊԻԿՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի 1-ին և 2-րդ չափաբաժնով ներկայացված հայտը մերժվել է՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու՝ շինարարության իրականացման լիցենզիայի բացակայության պատճառով:

ԵՔԼ-ԲՄԱՇՁԲ-24/2 ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է 12.06.2024թ.-ին հրապարակվել է գնումների ինտերնետային կայքի տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր):

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության հասցեն | Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | Որպես ընտրված մասնակցի հրաժարվել է կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «ՊԱՊԻԿ ՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | 08246386 | ք. Երևան, Կոմիտասի պող. 36Գ, բն. 78, | Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը | - | - | 24.06.2024թ: ԵՔԼ-ԲՄԱՇՁԲ-24/2 |

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, և

Ղեկավարվելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, նույն հոդվածի 2-րդ մասով.

## ՈՐՈՇԵՑԻ

1. «ՊԱՊԻԿՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին ներառել գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

*ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ* *Ա. ԹԵՎՈՍՅԱՆ*

Կատարողներ Ա. Արաբյան,
Ա. Մինասյան
Հեռ. 010 54 39 80